

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Լեոյի ծննդյան 150-ամյակի առթիվ



**ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ,
Պատմագիտության դոկտ**

Յուրաքանչյուր սերունդ իր անցյալի հիշողությունից վերցնում, ժամանակի քննախույզ հայացքով գնահատում եւ գալիքին է փոխանցում անուններն այն արժանահիշատակների, որոնք կատարած վաստակի համար արժանանում են ժողովրդի անանց հարգանքին ու սիրուն: Մեր ժողովրդի համար այդպիսի անուններից է Լեոն (1860-1932):

Ծնվել է Շուշի քաղաքում 1860 թ. ապրիլի 14-ին, մահացել 1932 թ. նոյեմբերի 14-ին Երեւանում: 1878թ. ավարտել է Շուշվա քաղաքային վերակազմյալ դպրոցը: Այնուհետեւ ծննդավայրում ու Բաքվում աշխատել է որպես նոտարային գրագիր, հեռագրիչ, «Արոր» տպարանի կառավարիչ: Բարձրագույն կրթություն չի ստացել: 1895-1906թթ. Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի մշտական

աշխատակիցն էր եւ քարտուղարը: 1906-1907թթ. դասավանդել է Էջմիածնի Գեորգյան ճեմարանում, ապա տեղափոխվել Թիֆլիս եւ ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի: 1924թ. հրավիրվել է Երեսան եւ պետական համալսարանում հայագիտական տարբեր առարկաներ դասավանդել մինչեւ կյանքի վերջը:

Լեոն գրել սկսել է 1877 թվականից, առաջին թղթակցությունը տպագրել է «» թերթում եւ ավելի քան կես դար աշխատակցել հայ պարբերական մամուլին:

Բավական է թերթել XIX դարի վերջին քսանամյակի եւ XX դարի առաջին տասնամյակների կովկասահայ թերթերն ու ամսագրերը, թուղցիկ հայացք նետել ժամանակաշրջանի հայագիտական գրականությանը՝ համոզվելու համար, որ 18 տարեկանում ռուսական նարոդնիկական շրջաններում մեծ համարում ունեցող գերմանական գրող Ֆրիդրիխ Շաիլհագենի «Մեկը դաշտում զինվոր չէ» նշանավոր վեպի հերոսի Լեո անունը վեցրած-յուրացրած Առաքել Բաբախանյանը որպէս գրող, գրական քննադատ եւ հրապարակախոս ժամանակաշրջանի նշանավոր դեմքերից էր: Լեոն է գրել ռուսահայ գրականության առաջին պատմությունը, ստեղծել ըստ պատմաշրջանների գրական հոսանքների ամբողջական պատկերը՝ հայ գրականագիտական միտքը հարստացնելով նոր հասկացություններով եւ ըմբռնումներով: Նրա պայքարը գրական հետադիմական հոսանքների դեմ պատկանում է հայ քննադատական մտքի արժեքների թվին:

Լեոյի դիմադարձը գեղարվեստական գրականությունից եւ գրականագիտությունից դեպի հայ ժողովրդի հասարակական մտքի եւ քաղաքացիական պատմության ուսումնասիրման ասպարեզ հիմնականում տեղի ունեցավ XIX դարի վերջին տասնամյակին, պատմական մի ժամանակաշրջանում, երբ սխուրաստիկայի հիմքով հասակ առած կղերա-պահպանողական պատմագրությունը նահանջել էր իր նախկին դիրքերից՝ տեղի տալով ազգային-պահպանողական եւ լիբերալ-բուրժուական ուղղություններին: Ընտրելով վերջին ուղղությունը, նա կարողացավ առաջ անցնել ոչ միայն Մ. Էմինից եւ Ա. Գարագաշյանից, Զ. Պատկանյանից եւ Գր. Խալաթյանից, հայագետ Մխիթարյաններից, այլեւ Ստ. Պալասանյանից եւ Ալ. Երիցյանից: Լեոյի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը: Նրա բոլոր մինչխորհրդային գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր Գր. Արծրունու «Մշակ» թերթը:

Լեռնի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում եւ ազգերը, բարձրանում են, առաջադիմում աստիճաններով: Չնայած Լեռնի գիտական բեմելի պահին հայ պատմագիտության ազգային-պահպանողական ուղղությունը, կղերականի համեմատությամբ, նոր աստիճանի էր բարձրացրել պատմության ուսումնասիրությունը, բայց, այնուամենայնիվ, տառապում էր մեթոդաբանական եւ պատմաիմաստասիրական սահմանափակ հայեցողությամբ եւ չէր կարողանում պատմությունը դուրս բերել մտածողության իդեալիստական շրջանակներից: Տակավին 1890-ական թվականներին Լեռն դժգոհում էր, որ չկա ժողովրդի քաղաքացիական եւ սոցիալական հարաբերությունների պատմությունը, որ հայոց պատմությունն առավելապես դիտվում է արտաքին պատերազմների եւ ներարշավ դեպքերի համակցության մեջ: Նա համամիտ էր Բաֆֆու այն հարցադրմանը, թե «մեր պատմության մեջ գրեթե մոռացված է ամբոխը»: Պատմության մեջ ժողովրդի դերի կարելու մեթոդաբանությամբ Լեռն քննության առարկա դարձրեց ամբողջ հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչեւ հայ-ռուսական հարաբերությունները, Հայկական հարցն ու արեւմտեվրոպական դիվանագիտությունը, ընդամին, միատեսակ հետաքրքրություն հանդես բերելով ժողովրդի քաղաքական կողմնորոշումների ինչպես պատմական հանգամանքների, այնպես էլ դրանց շարժիչ գաղափարաբանության նկատմամբ: Ստեղծագործելու այս մեթոդաբանությամբ նրա ստեղծագործ գրիչը թափանցեց հայոց պատմության բոլոր սահմանները: Հայաստանի հին, միջնադարյան ու նոր պատմության ամենահրատապ եւ կենսական խնդիրների, հարեւան երկրների հետ զանազան առնչությունների, համաշխարհային տարբեր անցքերի, դեպի Ռուսաստանի հետ համագործակցության տանող փոխհարաբերությունների՝ Լեռնի խորատես գնահատականները մեծ նշանակություն են ունեցել հայ պատմագիտության զարգացման համար, նկատելի ազդեցություն գործել հայ հասարակագիտության մեջ ազգային մտածելակերպի ձեւավորման վրա:

Լեռն կարողացել է հատկապես վեր հանել հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները: Մինչխորհրդային շրջանի իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Պատմություն Երեւանի հայոց թեմական

հոգեւոր դպրոցի» եւ այլն) Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը եւ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: «Ռուսական զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն եւ հանգստություն,- գրել է Լեոն,- այլեւ կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի եւ եվրոպական քաղաքակրթության միջեւ: Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլեւս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր եւ կուլտուրական առաջադիմությունից»: Մեծ պատմաբանի այս մտայնությունը բխում էր այն իրադարձությունից, որ ստեղծվել էր արեւելահայ կյանքում Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու շնորհիվ: Հաստատված խաղաղությունը, կյանքի եւ գույքի համար ստեղծված անվտանգությունը նախադրյալներ ստեղծեցին արեւելահայերի ազգային համախմբման համար:

Լեոն խորքով եւ լայնքով ուսումնասիրել է արեւմտահայության ողբերգական դրության պատճառները, եվրոպական դիվանագիտության խարդավանքների առարկա Հայկական հարցը, հաստատագրել Թուրքիան մեծ տերությունների կցորդ դարձնելու մրցապայքարի արդյունքներով նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդներին սպասվելիք էլ ավելի ահավոր աղետները: Արեւելյան ճգնաժամին եւ Հայկական հարցին նվիրած իր աշխատություններում Լեոնին հաջողվել է պատմականության անշեղ դիրքերից լուսաբանել միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային հիմնախնդիրները, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործողությունները, որոնք ավելի են առնչվել արեւմտահայության ճակատագրին, Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական գործողություններին: Մեծ հետաքրքրությամբ են այսօր էլ կարդացվում ներքին դրամատիզմով հագեցված Հայկական հարցի վերաբերյալ նրա «Գլխատոն» եւ «Հայոց հարցի վավերագրերը» աշխատությունները, բազմաթիվ հոդվածները, որոնցում ցույց է տրվում, որ մեծ տերությունները նպատակ էին հետամտում բոլոր միջոցներով կանխել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական եւ դիվանագիտական վերընթացը: Վավերագրերի եւ համոզիչ տրամաբանության լեզվով Լեոն ընթերցողի առջեւ բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված եվրոպական տերությունների հանցավոր

դիվանագիտության խարդավանքները Հայկական հարցում: Լեոն բարձրացնում է վարագույրն այն նենգությունների, որոնցով տերությունները 1890-ական եւ 1910-ական թվականներին արեւմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսներից, այլեւ անմիջական մասնակիցը դարձան Հայոց ցեղասպանության իրականացմանը: Անշուշտ, Լեոն եւս ունեցել է արեւմտյան դիվանագիտության հայանպաստ խոստումները դյուրահավատորեն ընկալելու՝ ժամանակի հայ հասարակական մտքի շատ ներկայացուցիչներին ուղեկցող թուլությունը: Նա ավելորդ ներբողներ է շռայլել անգլիական լիբերալիզմի պարագլուխ Գլադստոնին՝ նրան համարելով «մարդասեր, տանջվածների պաշտպան, ազգերի եղբայրության հզոր ախոյան» եւ այլն: Սակայն, ի պատիվ իրեն, հետագայում նա Գլադստոնին բնութագրեց այնպես, ինչպիսի իրականում կար: Չորս անգամ Անգլիայի վարչապետի պաշտոնին տիրացած Գլադստոնին նա բնութագրեց որպէս մոլի իմպերիալիստի, գաղութային քաղաքականության հմուտ գործադրողի ու ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի թշնամու: 1925 թ. «Անցյալից» աշխատության մեջ Լեոն գրում է. «1880-ական թվականների Գլադստոնի փորձը պետք է լավ խրատած լիներ հայկական երեխայությանը, պարզ ցույց տալով նրան, որ Անգլիան Անգլիա է, եւ ոչ մի նշանակություն չունի, թե ով է այսօր նրա առաջին մարդը: Գլադստոն, Սոլսբերի, Բիկոնսֆիլդ,- որոնք անուններ են փոփոխական, հեղեղուկ, անկայուն: Անփոփոխը անգլիական արշինն է եւ նրա ծառա ու սպասավոր ամենքը, անգամ «մարդասերները», մեծ լինեն նրանք, թե փոքր-միեւնույնն է»: Հայկական հարցի նկատմամբ անգլիական քաղաքականության ողջ գործընթացի վերաբերյալ Լեոն ընդհանրացել է. «Բայց ոչինչ եւ ոչ մի բան չէր լուծվում: Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը՝ լլկանքների, լացի ու աղետի դասական հայրենիք»:

Լեոն ցասումնալից արտահայտություններով է բնութագրել ոչ միայն Անգլիայի, այլեւ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ մյուս մեծ տերությունների հակահայկական քաղաքականությունը: Անդրադառնալով Կ.Պոլսի հայկական կոտորածներին՝ Լեոն գրել է. «Կոտորածի մյուս օրը, երբ Կ. Պոլսի փողոցները դեռ կարմրած էին հայի արյունից, Վիլհելմ կայսրն Աբդուլ Համիդին ընծա էր ուղարկում իր պատկերը, զարդարված թանկագին քարերով»: Ըստ Լեոնի, մեծ տերությունների հայկական քաղաքականության արդյունքն այն

եղավ, որ «այժմ Թուրքաց Հայաստան չկա: Նա դարձել է մի վիթխարի գերեզման, որի վրա հավերժապես արձանագրված է. «Եվրոպայի գոհը»: Լեռնի աշխարհայացքը բարդ էր ու հակասական: Խորհրդային շրջանում գրած մի քանի աշխատություններում («Խոջայական կապիտալը եւ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ», «Թուրքաց հեղափոխության գաղափարաբանությունը» եւ այլն) Լեռն բացասական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական կողմնորոշումը, հայ ազատագրական շարժման գաղափարաբանությունը եւ նրա գործիչները՝ տրամագծորեն հակադիր մինչխորհրդային ժամանակաշրջանում իր դավանած դրական սկզբունքներին: Սակայն, անգամ իրարամերժ տեսակետների արտահայտման պայմաններում, մեծ գիտնականի նրա տիրապետող գաղափարը զգայուն էր հայության համագայլին ճակատագրին առնչվող քաղաքական կացությունները գնահատելիս: Նրա բոլոր պատմագիտական աշխատությունների գլխավոր լեյտմոտիվը մեկն է՝ անցյալի էջերում, անցյալի փորձի մեջ որոնել ազգի ազատագրության եւ ապահովության ամենից հուսադրող ուղիների բանալին: Պատահական չէ, որ ինչքան էլ նրա միտքն ակոսեր պոզիտիվ իրականության եւ իդեալիստական երեակայության սահմանները, աչք փակեր պատմական իրողությունների առջեւ ու խտացներ ռուսական ցարիզմի «խարդախ» քաղաքականության գույները, պատմական դետերմինիզմի դիրքերից ելնելով հարկադրված էր ընդունել, որ «եսամոլ ու շահամոլ» ռուսական նվաճողականությունը այնուամենայնիվ «նման չէր նախորդներին գեթ նրանով, որ անապատի ամայություն չէր բերում երկրներին եւ կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»: Սա նշանակում է, որ Լեռ պատմաբանը, քաղաքական հայագետը շարունակում էր ունենալ այն խոր գիտակցությունը, որ ձգտելով գրավել Սերժավոր Արեւելքի որոշ տարածքներ, ջանալով դրանց ենթարկել իր ցարական վարչակարգին, Ռուսաստանը կայսրությանը միացված տարածքները ակամա ներգրավում էր կայսրության հզոր շարժումների մեջ՝ հնարավորություն տալով հաղորդակցվելու առաջադիմական շարժումներին եւ եվրոպական մշակույթին:

Այսպես էին մտածում Լեռնի նախորդած եւ նրան ժամանակակից բոլոր հայ մեծերը:

« Ազգ »

ԱՄԵՐԻԿԱԿԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

*ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու,*



Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թթ.) պատմական ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայությունը, առաջադեմ մյուս ժողովուրդների հետ կողք կողքի, անմնացորդ մարտնչել է ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ բռնության՝ իր զգալի ավանդը ներդնելով հաղթանակի նվաճման գործում [*]: Նրանց շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն ամերիկահայերը:

ԱՄՆ-ի 10 միլիոնանոց բանակի բոլոր զորատեսակներում, բոլոր ռազմական գործողություններում (ասիական-խաղաղօվկիանոսյան, եվրոպական-աֆրիկյան-միջին-արեւելյան, օտար ռազմաջոկատներ) ծառայել են ավելի քան 20.000 ամերիկահայեր (1940 թ. ԱՄՆ-ում կար ավելի քան 200.000 հայ):



Ամերիկահայ զինվորների մեծ մասը վերադարձել է հաղթանակով, սակայն քիչ չեն եղել նաև հերոսաբար զոհվածները (շուրջ 500 հոգի), վիրավորները (5000-ից ավելի) եւ անհայտ կորածները (մոտավորապես 50 հոգի):

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Միացյալ Նահանգների ամենաբարձր կոչում ունեցող հայազգի զինվորականը գեներալ **Հայկ Շեքերջյանն** էր, որը 1942 թ. այդ կոչմանն էր արժանացել նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի կողմից: Դեռևս երիտասարդ հասակում դրսևորած քաղաքացիական բացառիկ խիզախության համար (նա տասնվեց տարեկան էր, երբ քաջաբար նետվել է սաստիկ հրդեհվող տան մեջ՝ փրկելով մի կնոջ ու նրա երեխային) ԱՄՆ-ի Ուեսթ-Փոյնթի ռազմական ակադեմիա ընդունված եւ ուսանած առաջին հայազգի զինվորականն էր, որը, հաջողությունների հասնելով, Առաջին աշխարհամարտից հետո ծառայել է Անտանտի զորքերի կազմում:



Ամերիկահայ բարձրաստիճան զինվորականների շարքում իրենց խիզախությամբ փայլել են նաեւ ամերիկյան բանակի հրամանատար **Ջեք (Միրակ) Նահիկյանը**, գնդապետներ՝ **Քրոք Բուշախը**, **Սարգիս Չարդարյանը** եւ այլք:

Միացյալ Նահանգների բացառիկ եւ ամենաբարձր պարգեւին՝ Կոնգրեսի Պատվո շքանշանին (որով ամերիկյան բանակից պարգեւատրվել էր ընդամենը 87 մարդ) արժանացել էր ամերիկյան հերոս, ավագ լեյտենանտ Էռնեստ Հ. Դերվիշյանն իր անօրինակ եւ գրեթե առասպելական խիզախության համար, որ նա ցուցաբերել էր 1944 թ. մայիսին՝ իտալական Սիստեռնա վայրում: Կատաղի ընդհարման ժամանակ կորցնելով իր մարտական ընկերներին եւ մեն-մենակ հայտնվելով թշնամական շրջափակման մեջ՝ նա կարողացել էր ռազմական արվեստի իր աներեւակայելի հնարքներով գերել հակառակորդի միանգամից 45 զինվոր, խլել 3 գնդացիք եւ 10 ստրճանակ: Պատերազմից հետո գնդապետի աստիճանով զորացրված Է. Դերվիշյանը զբաղեցրել է ռազմական բարձր պաշտոններ. եղել է Ամերիկյան ազգային լեզունի փոխհրամանատար, ռազմական ու պետական տարբեր հարցերով խորհրդական:



Հետեւակային ծառայության մեջ դրսեւորած անհատական հերոսության համար երկրի երկրորդ բարձրագույն պարգեւին՝ Առանձնահատուկ ծառայության խաչ շքանշանին արժանացել է շտաբի սերժանտ **Հենրի Կալփակյանը** (հետմահու), ծովային ծառայության մեջ՝ փոխհրամանատար **Կեղրիկ Չանյանը**, գնդապետ **Հարրի Կիզիրյանը** եւ առաջին կարգի լեյտենանտ **Վիկտոր Մաղաքյանը**: Խիզախության համար Արծաթե աստղ բարձր շքանշանով պարգեւատրվել են 52 ամերիկահայեր, որոնցից 5-ը՝ հետմահու: Անգնահատելի նվիրվածության եւ օրինակելի ծառայության համար Երախտիքի լեգեոն շքանշանի են արժանացել գնդապետ **Քրրք Բուչախը**, փոխգնդապետ **Արամ Թութեյանը**: Օդաչուի սխրանքի համար բարձր պարգեւի՝ Առանձնահատուկ օդանավորդության խաչ շքանշանի արժանացել են 44 ամերիկահայեր, որոնցից 2-ը՝ հետմահու: Անձնական խիզախության եւ պատերազմական դժվարին հանգամանքներում օգնության հասնելու համար սահմանված Չինվորական շքանշանով պարգեւատրվել են 11 ամերիկահայեր, որոնցից 1-ը հետմահու:



Ամերիկահայ հերոսների նախակարասպետը ծնունդով վանեցի, առաջին կարգի շարքային **Վարդան Աղաբաբյանն** էր Սփրինգֆիլդից, որը պարգևատրվել էր ամերիկյան ռազմական բարձրագույն երկու շքանշաններով: Նա մասնակցել էր Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերին, վիրավորվել 14 անգամ:

1941 թ. դեկտեմբերի 7-ին Խաղաղ օվկիանոսում ամերիկյան 86 ռազմանավերի նկատմամբ Ճապոնիայի իրականացրած հարյուրից ավելի ռմբահարումների ժամանակ՝ Փիրլ-Հարբորում իր զինվորական պարտքը կատարելիս զոհվել է առաջին ամերիկահայ զինծառայողը՝ կրտսեր ենթասպա **Ջեյմս Թոփայանը** (պատերազմի ավարտից հետո Բոստոնի փողոցներից մեկը կոչվել է նրա անունով):



Բազմաթիվ ամերիկահայեր մասնակցել են 1945 թ. ապրիլի 27-ին Էրբա գետի վրա դաշնակից երկրների եւ ռուսական զինվորների հիշարժան հանդիպմանը, ընդգրկվել են ամերիկյան բարձրաստիճան հրամանատարությանը սպասարկող անձնակազմում՝ ծառայության բերումով ակնատես դառնալով պատմական տարբեր կարեւոր իրադարձությունների: Ամերիկահայերն իրենց անմիջական մասնակցությունն են բերել նաեւ խաղաղության տարբեր բանակցությունների մախապատրաստական եւ ընթացիկ աշխատանքներին, տվել են նաեւ բազմաթիվ հետախույզներ:

Ամերիկահայ բազմաթիվ ընտանիքներ ռազմաճակատ են ուղարկել միանգամից մի քանի զավակներ. զինվորագրվածների թվում շատ են եղել եղբայրներ եւ քույրեր, երկվորյակներ եւ եռյակներ, ամուսիններ, հայրեր եւ որդիներ, ազգականներ: Ամերիկյան բանակի բոլոր ռազմատեսակներում ծառայել են նաեւ հարյուրավոր հայուհիներ, ընդ որում, ավելի քան քառասունը՝ ռազմածովային ուժերում, մյուսները՝ հետեւակում եւ ռազմաօդային ուժերում:

Ամերիկահայերն իրենց ուժերն ու մտավոր կարողությունները ներդրել են նաեւ «ներքին ճակատում»՝ ներգրավվելով ռազմամթերային, նավաշինարարական եւ ռազմական այլ արտադրություններում, ընդհուպ՝ ատոմային ռումբի ստեղծմանը: Երեսուներկուամյա ատոմագետ դոկտոր **Հարրի Դադլյանն** իր տաղանդի ծաղկման շրջանում, ատոմային ռումբի ստեղծմանը նախորդած փորձարկումների ժամանակ, պայթյունի զոհ է դարձել: Այս ասպարեզում իրենց դրսեւորել են նաեւ **Ջոն Օհանեսյանը**, **Սիմոն Էքիզյանը**, փոխհրամանատար **Արամ Փարունակը**: Ռ-ազմական ասպարեզում իրենց գիտելիքներն են ծառայեցրել պատերազմական դեպարտամենտի հատուկ վկայագրով պարգեատրված ավագ սերժանտ **Հերոդ Շահնագարյանը**, քիմիկոսներ՝ մայոր **Ջավեն Նալբանդյանը**, փոխգնդապետ **Կարլ Դոքմեջյանը**: Վերջինիս ստեղծած վառելիքային հզոր կործանիչ տանկը գործադրվել է Իտալիայի նվաճման ժամանակ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկահայերն անձնուրաց ծառայել են նաեւ ռազմական բժշկության ասպարեզում: Իսկ լուսանջելեսաբնակ վիրաբույժ փոխգնդապետ **Լեոն Աշճյանն** առանձնահատուկ էր Լոնդոնի ռազմական գլխավոր հիվանդանոցում իր իրականացրած բացառիկ պլաստիկ վիրահատություններով: Ամերիկյան բանակում իրենց անձնագրիությամբ ու

հոգատարութեամբ աչքի են ընկել հայազգի զինվորական բուժբույրերը, մասնակցել նաեւ աշխարհի տարբեր մայրցամաքներում Ամերիկյան կարմիր խաչի իրականացրած փրկարար աշխատանքներին:

Հայերի տաղանդով, քաջութեամբ եւ նվիրվածութեամբ հիացել ու հպարտացել են ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական ու ռազմական գործիչներ՝ արդարացի կերպով ընդգծելով ամերիկահայոց առանձնահատուկ տեղն ու դերը հաղթանակի նվաճման գործում: Անհատ քաղաքացիներից բացի, Երկրորդ աշխարհամարտում հաղթանակի նվաճման գործում իրենց անգնահատելի նպաստն են բերել նաեւ ամերիկահայ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ եւ կուսակցություններ:

Պատերազմի տարիներին հայրենասիրական մղումով ռոքի էին ելել ամերիկյան տարբեր քաղաքների հայկական կենտրոնները: Օրինակ՝ Նյու Յորքի Ամերիկահայերի կոմիտեն ամբողջ պատերազմի ընթացքում հանգանակել եւ ռազմական տեխնիկա գնելու նպատակով կառավարությանն էր տրամադրել մի քանի միլիոն դոլար, որով զնվել էին «Հայաստանի ոգի», «Արարատ» եւ այլ հայաշունչ անուններ կրող ինքնաթիռներ ու նավեր: Սան Ֆրանցիսկոյի հայերն իրենց հանգանակած միջոցներով Հայկական կոմիտեի անունից 1942 թ. օգոստոսին Ամերիկյան կարմիր խաչին են նվիրել «Մասիս» երկաթուղային կառաշարը, իսկ երկրի ռազմական կարիքների համար միայն 1943 թ.՝ 1 մլն դոլար: «Ֆրեզնոյի ամերիկահայ քաղաքացիների լիգայի» եւ անհատ հայ նվիրատուների ջանքերով 1942-1944 թթ. ընթացքում հավաքվել է շուրջ 8,5 մլն դոլար եւ այլն:

Ամերիկահայերը գործուն կերպով են արձագանքել նաեւ պատերազմի արժեթղթերի վաճառքի կառավարության կոչին՝ երկրի այլ ազգային ներկայացուցիչների համեմատութեամբ զնելով մեծ քանակութեամբ արժեթղթեր:

Ֆաշիզմի դեմ պայքարի ճակատագրական տարիներին ամերիկահայ տարբեր կուսակցությունները միասնականություն են դրսեւորել ոչ միայն իրենց քաղաքացիական պարտքի կատարման, այլեւ՝ հեռավոր հայրենիքին նյութապէս եւ բարոյապէս սատարելու գործում: Այդ մասին է վկայում 1941 թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ԽՍՀՄ կառավարությանն ուղղված ամերիկահայության հետեւյալ դիմումը.

«Մենք, ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պաշտպանէ Կարմիր բանակը, կը զգանք, որ պարտաւոր ենք օգնելու Սովետ Միութեան, պայքարելու մինչեւ այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսէն կ'ոչնչացուի ֆաշիզմը»:

Պատերազմի ամենավճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է ազգային ճակատներում, որոնց գործուն կազմակերպություններից էր նաեւ 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում վերջնականապէս ձեւավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՍԳՀԿ, Ամերիկահայ առաջադիմական միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական եւ այլ միությունների ներկայացուցիչներից), որը, երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով, միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ ամերիկյան եւ խորհրդային բանակների, Կարմիր խաչի եւ մայր հայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչեւ 1950 թ.) ձեռնամուխ է եղել նաեւ նորակազմ ՄԱԿ-ի շրջանակներում Հայ դատին արդարացի լուծում տալու խնդրին: Ամերիկահայ ազգային խորհրդի հայրենանվեր ջանքերով 1944 թ. գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված ԽՍՀՄ ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլար արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Հայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղէն: Բացի այդ, Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով Կարմիր բանակի համար առաքվել է 50 հազար դոլար, ինչպէս նաեւ 87 հազար դոլար արժողության դեղորայք: Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող Ամերիկահայկական կոմիտեն մինչեւ 1943 թ. հանգանակել է. Կարմիր բանակի համար շուրջ 56 հազար դոլար, կարիքավորների համար՝ 29 հազար դոլար, Հայաստանի համար՝ 11 հազար դոլար, ինչպէս նաեւ 9 հազար դոլար արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղէն եւ այլն:

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ Խորհրդային Միությանը եւ Հայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաեւ Սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Մասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործում: Ամերիկահայության արագ եւ կազմակերպված ջանքերով 1943 թ. մարտից մինչեւ 1944 թ. մարտ այդ նպատակով ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազար դոլար՝ «Մասունցի Դավիթ»

տանկային առաջին (նաեւ 173 հազար դոլար՝ Կարմիր խաչի հիմնադրամին), ապա՝ 40 հազար դոլար երկրորդ շարասյան կառուցման համար, որոնք, շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային երկրի ազատագրական հաղթարշավին: Իսկ 1945 թ. «Ձորավար Բաղրամյան» տանկային նոր շարասյան կառուցման համար սկսված հանգանակությունը դադարել է Հայրենական մեծ պատերազմի ավարտի հետ: Ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Գարեգին Ա արքեպիսկոպոս Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս) ջանքերով կազմակերպված Հայկական հանձնախումբը մեկ տարվա ընթացքում ի նպաստ Կարմիր բանակի, մայր հայրենիքի եւ Սփյուռքի հայրենակիցների հանգանակել է 120 հազար դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազար դոլար:

Թուրքական ջարդարարության գոհ դարձած եւ հրաշքով վերապրած հայության զգալի մասի համար բնորոշ էր Հայոց ցեղասպանությունից վերապրած հայ կնոջ խոսքը ԱՄՆ-ի բանակում ծառայած իր որդու մասին, որը, Երկրորդ աշխարհամարտի տարիներին հերոսաբար մարտնչելով, հասել էր մինչեւ Բեռլին. «Չավակս վրեժն առավ իր գերդաստանի այն անդամներուն, որոնք նախորդ պատերազմի ատեն գերմաններու մեղսակցությամբ եւ քաջալերությամբ սպանվեցան: Ան նաեւ վրեժ առավ նախորդ պատերազմին ջարդված հարյուր հազարավոր հայերու»:

Ահա թե ինչու, կիսելով հաղթանակի նվաճման գործում ԱՄՆ-ին եւ մայր հայրենիքին բաժին ընկած դժվարությունները, ամերիկահայությունը, ողջ սփյուռքահայության հետ, Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի հետ է կապել նաեւ Հայ դատի վերանայման եւ պահանջատիրության հույսերը:

() Այստեղ պետք է անել մի լուրջ վերապահում. ՀՅԴ-աշնակցության լիդերներից շատերը դիրքավորված են եղել ֆաշիստական ճամբարում: Խմբ.:*

Նկար 1. Հայկ Շեքերջյան, ամերիկահայ առաջին գեներալը

Նկար 2. Էռնեստ Դերվիլյան, ԱՄՆ-ի բարձրագույն պարգեւին արժանացած ամերիկահայը

Նկար 3. Վարդան Աղաբաբյան, ամերիկահայ հերոսների նախակարապետը

Նկար 4. Ջեյմս Թոփայան, ամերիկահայ առաջին գոհը

Նկար 5. Հարրի Դադլյան, ամերիկահայ ատոմագետ

Նկար 6. Վիկտոր Մադաբյան, ԱՄՆ-ի երկրորդ կարգի պարգեւին արժանացած ամերիկահայը

« Ազգ »

ՀՆԴԿԱՀԱՅՈՑ ՆՈՐ ԶԱՐԹՈՆԵՐԸ



Միայնա գործունեություն

Ավանդաշատ Հնդկաստանում հայորդիք ապրել են դարեր շարունակ՝ ժամանակների հողվություն այստեղ թողնելով բարի հիշատակներ եւ արարումներ: Հպարտության անօրինակ զգացումով եւ համակվում՝ տեսնելով հնդկահայերի կերտած հոյակերտ եկեղեցիները, կրթական եւ բարեսիրական հաստատությունները, նրանց բարերարությամբ եւ անմիջական մախաճեռությամբ կառուցված բազմաթիվ կանգուն շինությունները: Այդ արբությունները, հուշարձաններն ու կոթողները աղոթք են, սրբազան մասունքներ ու վկաներ զարմանահրաշ այս երկրում կերտված դարավոր մեր պատմության:

Փառավոր անցյալ ունեցող հնդկահայ համայնքն այսօր եւս նոր հաջողություններ է ամրագրում ազգային-եկեղեցական կյանքում՝ ունենալով բարեկարգ եւ պայծառաշուք եկեղեցիներ: Հնդկահայքի բարախող սիրտն է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը՝ Սփյուռքում գործող այն եզակի կրթական դարբնոցներից մեկը, որ շուրջ երկու դար հայեցի կրթություն եւ դաստիարակություն է ավանդել հազարավոր հայ պատանիների՝ ներշնչելով նրանց ազգային առողջ գիտակցություն եւ հայրենամիտ ոգի:

2009 թ. ապրիլին Հայրապետական տնօրինությամբ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ նշանակվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան **Տ. Խորեն արք. Հովհաննիսյանը**: Հնդկահայքը որդեգրեց զարթոնքի եւ վերելքի նոր ճանապարհ: Հայր Խորենի պաշտոնավարման մեկ տարին լիաբուռն

է «գործովք բարութեան»: Նորանշանակ հոգեւոր հովիվն իր համայնքանվեր գործունէութեամբ, անբասիր կենցաղով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եւ մեր հոգեւոր-մշակութային արժեքների նկատմամբ ունեցած անսահման սիրով կարողացավ նվաճել ողջ համայնքի սերն ու վատահոյությունը:

Նրա աշխատասենյակի դռները մշտապէս բաց են բոլորի առջեւ. նա եկել է տեր եւ պաշտպան կանգնելու իր նժդեհ զավակներին՝ եկած Իրանից, Իրաքից ու Հայաստանից, հաղորդակից եւ կարեկից լինելու նրանց հոգսերին: Այստեղ տիրում է ջերմ ընտանեկան մթնոլորտ. սաները պարուրված են հայրական գուրգուրանքով եւ ջերմութեամբ: Հայր սուրբի խնամակալութեան ներքո այսօր ճեմարանում հասակ է առնում մի նոր սերունդ: Դրա լավագույն առիավատչեան ծնողներից պարբերաբար նրան հասցեագրված երախտագիտական նամակներն են:

Հոգեւոր հովիվի այցելություններին անձկութեամբ են սպասում Կալկաթայի հայկական ծերանոցում: Անհուն մխիթարություն է ծերանոցի բնակիչների համար տեսնել ու զգալ նրա որդիական սերն իրենց հանդէպ, լսել նրան, քաջալերվել նրա ջերմ եւ սրտաբուխ խոսքերով:

Նրա պաշտոնավարման մեկ տարին լի էր հոգեւոր-մշակութային, շինարարական, կազմակերպչական, վարչական ոգեւորիչ ու բեղմնավոր իրագործումներով: Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալութեան տասնամյակի առիթով Կալկաթայի Ս.Երրորդություն եկեղեցու տարածքում կառուցվեց բարեգործական բուժկենտրոն եւ կոչվեց «Գարեգին Բ կաթողիկոս» բարեգործական բուժարան: Վերաբացվեց Կալկաթայի հարյուրամյա հայկական ակումբը, որը եղել եւ մնում է կալկաթահայության սիրված ժամանցային վայրերից մեկը:

Հայր Սուրբի միամյա գործունէութեան պտուղներն այսօր ակնհայտ են հատկապէս Մարդասիրական ճեմարանում: Որպէս հնդկահայ գաղութի անկապտելի մաս՝ անկումներով եւ վերելքներով լի է եղել ճեմարանի պատմությունը...Նրա պաշտոնավարումից անմիջապէս հետո իր ցուցումներով եւ պահանջով մեծ ուշադրություն դարձվեց ճեմարանի ուսումնական ծրագրի բարեփոխման, դասավանդման մեթոդների եւ դասախոսական կազմի որակավորման հարցերին: Արդյունավետութեան համար հայագիտական առարկաների ժամաքանակը համապատասխանացրեց ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան դայրոցական

Ժամաքանակին: Նկատի ունենալով Հնդկաստանի ազգային տոների բազմաքանակ լինելը եւ դրանց հետեւանքով դասերի հաճախակի դադարելը՝ արձակուրդներին 2 ժամ հատկացվել է պարտադիր սերտողությանը: Կառավարչի կարեւորագույն ձեռքբերումներից է նաեւ ճեմարանի հաշվապահական եւ տնտեսա-ֆինանսական գործերի ճշգրիտ ու պլանաչափ վերակազմակերպումը, որը տվեց իր բարի պտուղները: Այսպես՝ մինչեւ 2009 թ. ճեմարանը գրանցված է եղել Կալկաթայի բաշխիչ էլեկտրացանցում իբրեւ առեւտրային (կոմերցիոն) կազմակերպություն: Համապատասխան մարմինների հետ բանակցությունների արդյունքում ՀՄՃ-ն վերագրանցվեց իբրեւ մասնավոր հաստատություն. ամսական խնայողությունը հասնում է 28.8%-ի (մոտ 1200 ԱՄՆ դոլար): Այս ճկուն մարտավարության արդյունքում 30% համամասնականով բարձրացել է ճեմարանի ողջ անձնակազմի աշխատավարձը, եւ ճեմարանը համալրվել է առավել բարձրակարգ մանկավարժներով, կրկնապատկվել է երեխաների ամսական կրթաթոշակը, շքեղ վերանորոգվել եւ ժամանակակից սարքավորումներով հագեցվել դահլիճը: Վերանորոգվել են նաեւ Հայաստանից ժամանած ուսուցիչների բնակարանները, հարակից բաժինները:

Կալկաթայի լավագույն քոլեջներում սովորող սաները նախկինում հասարակական տրանսպորտով եւ տաքսիներով էին ուղեւորվում իրենց կրթական հաստատություններ: Այսօր ճեմարանը վարձել է հատուկ մեքենաներ, ինչն առավել անվտանգ եւ ապահով է դարձնում երեխաների երթևեկը: Օրավոր բարգավաճող Մարդասիրական անընդհատ համալրվում է նորանոր աշակերտներով. տարվա ընթացքում ճեմարան է ընդունվել 14 աշակերտ՝ Իրանից, Իրաքից, Հայաստանից եւ Հնդկաստանից: Առաջիկա ամսում սպասվում է իրանահայ երեխաների նոր խմբի ժամանում:

Հայր Խորենը շարունակում է հնդկահայ գաղութում ձեւավորված եւ հաստատված հայ գրքի հրատարակման հարուստ ավանդույթը. Գարեգին Բ-ի օրհնությամբ հրատարակեց «Հնդկահայք» վերտառությամբ տարեգիրքը, որը հնդկահայ գաղութի տարեգրության ամփոփ վավերագիրն է: Այս հրաշալի ձեռնարկը հավատ է ընծայում, որ հայր Խորենին կհաջողվի վերստին կյանքի կոչել հայ գրքի տպագրությունը Հնդկահայքում, որտեղ դեռ 1794 թ. ծնվել էր հայ պարբերական մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը»:

Անցնող մեկ տարվա բեղմնավոր գործունեությունն ինքնին պերճախոս վկայություն է, որ հանձին Հոգեշնորհ Տ. Խորեն արդ.

Հովհաննիսյանի, Հնդկահայքն ունի հմուտ, ապագայի տեսլականով
խանդավառ բարեջան «տեր եւ ծառա»՝ մաքուր հոգով, բյուրեղյա
ազնվությամբ, սրտակից եւ հաղորդական:

Armenian Genocide Quotes



World figures

Mustafa Kemal Atatürk

Founder of the modern Turkish Republic in 1923 and revered throughout Turkey, in an interview published on August 1, 1926 in The Los Angeles Examiner, talking about former Young Turks in his country...

These left-overs from the former Young Turk Party, who should have been made to account for the millions of our Christian subjects who were ruthlessly driven en masse, from their homes and massacred, have been restive under the Republican rule.

Adolf Hitler

While persuading his associates that a Jewish holocaust would be tolerated by the west stated...

Who, after all, speaks today of the annihilation of the Armenians?

“Our strength lies in our intensive attacks and our barbarity...After all, who today remembers the genocide of the Armenians?”

Yossi Beilin

Israeli Deputy Foreign Minister. April 27, 1994 on the floor of the Knesset in response to a TV interview of the Turkish Ambassador

It was not war. It was most certainly massacre and genocide, something the world must remember... We will always reject any attempt to erase its record, even for some political advantage.

Gerald Ford

Addressing the US House of Representatives.

Mr. Speaker, with mixed emotions we mark the 50th anniversary of the Turkish genocide of the Armenian people. In taking notice of the shocking events in 1915, we observe this anniversary with sorrow in recalling the massacres of Armenians and with pride in saluting those brave patriots

who survived to fight on the side of freedom during World War I. -
Congressional Record, pg. 8890

Turkish Quotes

Beginning with multiple quotes from the 3 rulers of wartime Turkey,
Cemal Pasha, Enver Pasha and Talat Pasha.

Enver Pasha

One of the triumvirate rulers publicly declared on 19 May 1916...

The Ottoman Empire should be cleaned up of the Armenians and the
Lebanese. We have destroyed the former by the sword, we shall destroy
the latter through starvation.

In reply to US Ambassador Morgenthau who was deploring the massacres
against Armenians and attributing them to irresponsible subalterns and
underlings in the distant provinces, Enver's reply was...

You are greatly mistaken. We have this country absolutely under our
control. I have no desire to shift the blame onto our underlings and I am
entirely willing to accept the responsibility myself for everything that has
taken place.

Talat Pasha

In a conversation with Dr. Mordtmann of the German Embassy in June
1915...

Turkey is taking advantage of the war in order to thoroughly liquidate
(grundlich aufzaumen) its internal foes, i.e., the indigenous Christians,
without being thereby disturbed by foreign intervention.

After the German Ambassador persistently brought up the Armenian
question in 1918, Talat said "with a smile"...

What on earth do you want? The question is settled. There are no more
Armenians.

Jemal Pasha

To a German officer upon seeing the deportations in Mamure said...

I am ashamed of my nation (Ich schame mich fur meine Nation)

Minister of the Interior of Turkey publicly declared on March 15 that on
the basis of computations undertaken by Ministry Experts...

800,000 Armenian deportees were actually killed...by holding the guilty
accountable the government is intent on cleansing the bloody past.

Prince Abdul Mecid

Heir-Apparent to the Ottoman Throne, during an interview...

I refer to those awful massacres. They are the greatest stain that has ever
disgraced our nation and race. They were entirely the work of Talat and
Enver. I heard some days before they began that they were intended. I
went to Istanbul and insisted on seeing Enver. I asked him if it was true

that they intended to recommence the massacres which had been our shame and disgrace under Abdul Hamid. The only reply I could get from him was: 'It is decided. It is the program.'

Grand Vezir Damad Ferid Pasha

Equivalent rank in the US would be head of the cabinet I think. He described the treatment of the Armenians as...

A crime that drew the revulsion of the entire humankind.

Mustafa Arif

Minister of Interior stated on 13 December 1918...

Surely a few Armenians aided and abetted our enemy, and a few Armenian Deputies committed crimes against the Turkish nation... it is incumbent upon a government to pursue the guilty ones. Unfortunately, our wartime leaders, imbued with a spirit of brigandage, carried out the law of deportation in a manner that could surpass the proclivities of the most bloodthirsty bandits. They decided to exterminate the Armenians, and they did exterminate them.

Orhan Pamuk

Famous Turkish author stated (and was put on trial for making this statement) in February, 2005...

one million Armenians were killed in these lands and nobody but me dares to talk about it.

Various Western Quotes

Henry Morgenthau Sr.

U.S. Ambassador to the Ottoman Empire Ambassador Morgenthau's Story, 1919

When the Turkish authorities gave the orders for these deportations, they were merely giving the death warrant to a whole race; they understood this well, and, in their conversations with me, they made no particular attempt to conceal the fact. . . . I am confident that the whole history of the human race contains no such horrible episode as this. The great massacres and persecutions of the past seem almost insignificant when compared to the sufferings of the Armenian race in 1915.

British Viscount James Bryce

October 6, 1915, speech

The massacres are the result of a policy which, as far as can be ascertained, has been entertained for some considerable time by the gang of unscrupulous adventurers who are now in possession of the Government of the Turkish Empire. They hesitated to put it in practice until they thought the favorable moment had come, and that moment seems to have arrived about the month of April.

House of Lords, Hansard (5th series), Vol. XIX, 6 October 1915. Cols?

I am sorry to say that such information has reached me from many quarters goes to show that the figure of 800,000 which the noble earl thought incredible as a possible total for those who have been destroyed since May last is, unfortunately, quite a possible number. That is because the proceedings taken have been so absolutely premeditated and systematic, the massacres are the result of a policy which, as far as can be ascertained, has been entertained for some considerable time by the gang who are now in possession of the government of the Turkish Empire.

Count Wolff-Metternich

German Ambassador to the Ottoman Empire July 10, 1916, cable to the German Chancellor

In its attempt to carry out its purpose to resolve the Armenian question by the destruction of the Armenian race, the Turkish government has refused to be deterred neither by our representations, nor by those of the American Embassy, nor by the delegate of the Pope, nor by the threats of the Allied Powers, nor in deference to the public opinion of the West representing one-half of the world.

Theodore Roosevelt

May 11, 1918, letter to Cleveland Hoadley Dodge

...the Armenian massacre was the greatest crime of the war, and the failure to act against Turkey is to condone it ... the failure to deal radically with the Turkish horror means that all talk of guaranteeing the future peace of the world is mischievous nonsense.

Herbert Hoover

The Memoirs of Herbert Hoover, 1952

The association of Mount Ararat and Noah, the staunch Christians who were massacred periodically by the Mohammedan Turks, and the Sunday School collections over fifty years for alleviating their miseries—all cumulate to impress the name Armenia on the front of the American mind.

Jimmy Carter

May 16, 1978, White House ceremony

It is generally not known in the world that, in the years preceding 1916, there was a concerted effort made to eliminate all the Armenian people, probably one of the greatest tragedies that ever befell any group. And there weren't any Nuremberg trials.

Ronald Reagan

April 22, 1981, proclamation

Like the genocide of the Armenians before it, and the genocide of the Cambodians which followed it, ... the lessons of the Holocaust must never be forgotten.

George Bush Sr.

April 20, 1990, speech in Orlando, Florida

[We join] Armenians around the world [as we remember] the terrible massacres suffered in 1915–1923 at the hands of the rulers of the Ottoman Empire. The United States responded to this crime against humanity by leading diplomatic and private relief efforts.

John Evans

US ambassador to Armenia said to American Armenians on February 19, 2005

"Today I shall call this Armenian genocide". "I think that we, the US government, owe you, our fellow citizens, a more straightforward and honest discussion of this problem. I can tell you as a person who has studied this problem - I have no doubts about what happened." "I think that it is inappropriate for us, the Americans, to play with words in this case". "I believe that we must call a spade a spade."

Other Quotes

Lord Robert Cecil

Under-secretary of state for foreign affairs (House of Commons, Hansard (5th series), Vol. LXXV, 16 November 1915, Cols. 1770-1776.)

I think it may be said, without the least fear of exaggeration, that no more horrible crime has been committed in the history of the world... This is a premeditative crime determined on long ago... It was a long-considered, deliberate policy to destroy and wipe out of existence the Armenians in Turkey. It was systematically carried out. It was ordered from above...

S. D. Sazonov

From speech of S. D. Sazonov, Minister of Foreign Affairs, at the State Duma

...I had to refer to the unprecedented sufferings of this unfortunate nation before. Under the favourable control of the allied Germany, the Turks evidently intend to fulfil their long-standing dream to exterminate the Armenians, which do not submit to the influence of the Muslims and hinder the plans of Germany to subdue the Turkish Empire in economy and politics...

Smirnov

Dispatch of Smirnov, the Russian envoy to Cairo, to S. Sazonov, Russia's Minister of Foreign Affairs. (June 25, 1915)

Cruelties committed against the Armenians in Syria and neighboring vilayets, violations, massacres and very often mass slaughter of the population of the Armenian villages are constantly repeated; families are cruelly separated, wives are separated from husbands, children are separated from parents, and all of them are exiled in various directions.

Especially the Armenian clergy are pursued cruelly; the priests are haunted, tortured, their nails are pulled out.

12,000 Turkish troops lately occupied Zeitoun which was a stronghold for the Armenians and didn't let the Turkish forces come near. Threatening, lying and giving promises the Turks made the Armenians surrender and occupying the city they settled accounts with the inhabitants and the defenders of the city. Thousands of people were slaughtered in spite of the promises of security...

Valery Brusov

(1873-1924) Russian writer, literary critic, translator.

"Turks continued their previous policy. They would not stop to commit massive and most awful massacres that even Leng Timur would not dare to do". -1916

Wangenheim

Report of Wangenheim, German ambassador in the Ottoman Empire to the Reichskanzler Behtmann-Hollweg on June 17, 1915:

Deportation of the Armenians from their homes in the vilayets of Eastern Anatolia, and their resettlement in other regions is implemented cruelly...

...it becomes obvious that deportation of the Armenians arises not only from military necessity, the internal minister Talaat Bey told about it honestly to Doctor Mortsman, who is employed at the Empire Embassy now. Talaat said: "The Sublime Porte intends to make use of the world war for cleaning the whole country from internal enemies, the local Christians, so that foreign countries won't hinder doing it by their diplomatic interference. This measure will serve to the interests of all allies of Turkey, especially the Germans and so the latter will be able to consolidate"...

Most of the quotes of Turkish origin are from Vahakn Dadrian's collections which were published in *Genocide: A Critical Bibliographic Review*, Vol. 2 (Israel Charny, ed.)

Adam Schiff

"We cannot maintain the moral force we need to take action against the genocide going on in Darfur, if the Administration continues to equivocate about the genocide against the Armenians."

-Representative Adam Schiff, March 2007

"The legacy of the Armenian Genocide is woven into the fabric of America."

Jerry Costello

"The Armenian Genocide is a historical fact, despite the efforts of some to minimize its scope and deny its occurrence." -Jerry Costello